ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2022 թվականի N 99-Ա

ԵՐԵԽԱՅԻ ՏԱՐԻՔԸ ՈՐՈՇՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 18-Ն որոշման N 1 հավելվածի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերի՝ **որոշում եմ.**

1. Ստեղծել երեխայի տարիքը որոշող մարզային հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) ***Միհրան Սահակյան*** - հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետ,

2) ***Մարի Բալյան*** - հանձնաժողովի քարտուղար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության խորհրդական,

3) ***Արփյուշ Պետրոսյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ,

4) ***Համլիկ Մակարյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ,

5) ***Նորայր Միքայելյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Աբովյանի ծննդատուն» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրեն,

6) ***Լևոն Պետրոսյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության Հրազդանի տարածքային կենտրոնի տնօրեն *(համաձայնությամբ)*,

7) ***Գևորգ Զաքարյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի մարզային վարչության պետի ծառայության գծով տեղակալ, ոստիկանության մայոր *(համաձայնությամբ)*:

2. Հանձնաժողովին՝ աշխատանքները իրականացնելիս ղեկավարվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի N 18-Ն որոշման պահանջներով:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2011 թվականի մարտի 22-ի *«Երեխայի փարիքը որոշող մարզային հանձնաժողով ստեղծելու մասին»* N 109-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2022 թվականի մարտի 16
ք. Հրազդան